

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՎԵՐԺԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹ-ԱՅՈՒՄ

Արման Մադյան

«Մեծ է մեր վիշտը, խորունկ՝ մեր հուզումը նաև նրա համար, որ եվրոպական պետությունները ողբալիորեն ուխտադրուժ գտնվեցին մեր ազգի, մեր դատի հանդեպ, և թույլ տվեցին, որ քաղաքակիրթ մարդկության հնագույն և թանկագին մեկ մասնիկը կազմող, Արևելքում քրիստոնյա աշխարհի դարավոր առաջապահը հանդիսացող մեր բարի, մեր շինարար, մեր աշխատավոր և խաղաղասեր ժողովուրդը ենթարկվի անլուր մարտիրոսագրության»:

Վազգեն Ա. Պալճյան

Դարեր շարունակ Հայոց կաթողիկոսներն ու հոգևորականները, մի ձեռքին՝ զենք, մյուսին՝ Ավետարան, կանգնել են հայ զինվորի ու ժողովրդի կողքին, ոգեշնչել նրանց ու մարտնչել «հանուն հայրենյաց և հավատքի», քանզի Հայոց եկեղեցին ազգային եկեղեցի է, կարողացել է պահպանել ազգային ինքնությունը, ոչ թե հակադրության մեջ է մտել ազգայինի հետ, այլ, հոգևոր դրոշմ դնելով, հոգևոր հավիտենականության մի նոր փայլ է հաղորդել ազգային արժեքներին: Այս իրողությունը նկատի ունենալով՝ Նիկոլ Աղբալյանը գրում է, թե չորրորդ դարում Հայաստանը քրիստոնեացավ, իսկ հինգերորդ դարում քրիստոնեությունը հայացավ: Հայոց եկեղեցին ազգային է ոչ միայն այն պատճառով, որ մեր եկեղեցու հավատացյալների գերակշիռ մասը հայ ժողովրդի զավակներն են, այլ որովհետև սերտորեն միահյուսված է հայ կյանքին, հավաքական արտահայտությունն է հայ մշակույթի, արվեստի, դպրության և ներառել է անգամ նախաքրիստոնեական շրջանի այն տարրերը, որոնք կենսունակ էին և շարունակեցին կենցաղավարել նոր վարդապետության շրջանակումը¹: Այսպիսով՝ Հայոց եկեղեցին, ժամանակային առումով, ներկայացնում է հայոց պատմության ընթացքի մի մասը, իսկ տարածական ա-

¹ Զարեհ վարդապետ Կաթաղյան, Հայ եկեղեցու դերը հայ ինքնության կերտման և պահպանության գործում - http://haegtek-arm.blogspot.am/2013/09/blog-post_566.html:

նումով՝ ամբողջ Հայկական լեռնաշխարհը և հայկական գաղթավայրերը:

Հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան կառավարությունը ոչ միայն հետևողականորեն ոչնչացրեց Օսմանյան կայսրության սահմաններում ապրող բազմահազար հայ բնակչությանը, որի մեծագույն մասը Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդ էր, այլև դաժան հաշվեհարդար տեսավ հայ հոգևորականների հետ, ոչնչացրեց հայկական մշակույթը, եկեղեցիներն ու վանքերը, ուսումնագիտական կենտրոնները: Թուրքական իշխանությունները Կ.Պոլսի հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանին արքունիցին Բաղդադ, ապա՝ Մոսուլ, իսկ Սսի կաթողիկոս Սահակ Բ. Իսապայանին՝ Բաբ (Հալեպի մոտ), ապա՝ Երուսաղեմ: Հայոց ցեղասպանության տարիներին նահատակվեցին մոտ 4.000 հայ հոգևորականներ: Ուստի, բնական է, որ Հայոց եկեղեցին չէր կարող անտարբեր մնալ, դեռ ավելին՝ որպես որդեկորույս ծնող պարտավոր էր նահատակների ոգեկոչման և նրանց հիշատակի հավերժացման գործընթացի դրոշակակիրը լինելու... և եղա՛վ:

Ըստ որոշ տվյալների՝ մեծ երգիծաբան Երվանդ Օտյանն առաջինն էր, որ Կ.Պոլսի «Ժամանակ» օրաթերթում առաջարկել էր 1915 թ. անմեղ զոհերի համար հիշատակի հատուկ օր ընդունել և ոգեկոչել այդ օրը²: Անվանի մշակութային գործիչ, հանրագիտակ, «Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղետալի 1915 տարիին» կոթողային աշխատության հեղինակ Թեոդոսիոսը 1919 թ. նոյեմբեր 11-ին «Բարեշրջութիւն հայ օրացոյցի» վերնագրով հոդվածի մեջ առաջարկում է, որ, հայ ազգի հին նահատակների փոխարեն, օրացույցի և եկեղեցու մեջ հիշատակվեն հայության նոր նահատակներ³: 1919 թ., երբ Կ.Պոլիսը գտնվում էր Անտանտի պետությունների զինված ուժերի հսկողության՝ ռազմակալության տակ, Հայոց ցեղասպանությունից մազապուրծ մի խումբ հայ մտավորականների նախաձեռնությամբ ստեղծվում է «Ապրիլ տասնմեկի սգահանդէսի յանձնախումբ», և 1919 թ. ապրիլի 12-ին Կ.Պոլսում կատարվում է եկեղեցական և աշխարհական սգահանդէս⁴:

¹ Տե՛ս «Էջմիածին», 1965, ԵՁԷ, էջ 112:

² Տե՛ս Ապրիլ 24. Ի՞նչպես է այս օրը մտել հայոց մեջ - <https://goo.gl/QfjkjP>

³ Տե՛ս **Թէոդիկ**, Ամէնուն տարեցոյցը: Ժ-ԺԴ տարի 1916-1920, Հրատ. Հրաչեայ Տէր-Ներսեսեանի, Կ.Պոլիս, տպագր. Կ. Քեչիշյանի, 1919, էջ 287:

⁴ Տե՛ս **Թէոդիկ**, Յուշարձան 1915 ապրիլ (11) քսանըջորսի: Պատրաստուած «Ապրիլ (11) քսանըջորսի սգահանդէսի յանձնախումբ»ին կողմէ /Հաւաքեց եւ խմբ.՝ Թէոդիկ, Առա-

1920 թ. մարտի 25-ին անվանի հայ գրող Վրթանես Փափագյանը, որը Վաղարշապատի դպրոցի տեսուչն էր, նամակով՝ դիմում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե. Սուրենյանցին՝ առաջարկելով Հայոց Տոնացույցի մեջ ամրագրել ապրիլի 11-ը (հին տոմարով)՝ իբրև «Յիշատակ 760 հայ նահատակ մտաւորականների, որոնք ընկան համաշխարհային մեծ պատերազմի օրերին՝ թրքական վայրագ սրից»։ Նույն առաջարկը նա ներկայացնում է նաև Հանրապետության խորհրդարանին, կրթության և արվեստի նախարարին։ Հայոց Հայրապետն անմիջապես արձագանքում է հատուկ շրջաբերականով՝ առ 26 մարտի 1920 թ.², Երևանի և Բաքվի կոնսիստորիաներին, Թիֆլիսի առաջնորդին և Ղարաբաղի կառավարչին հանձնարարում է, որպեսզի «առաջիկա Ջատկի երկուշաբթի մեռելոցին, մարտի 30/ապրիլի 12-ին՝ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեն ի յիշատակ 1915 թ. ապրիլի 11-ին Կ.Պոլիս և Հայաստանի բոլոր գաւառներում նահատակած թիւով մօտ 760 մտաւորականների և հոգևորականների»³։ Քանի որ 1920 թ. ապրիլի 11-ը համընկնում էր Սուրբ Հարության՝ Ջատկի տոնին, որոշվում է Մեծ եղեռնի նահատակների հիշատակը նշել ապրիլի 12-ին՝ Մեռելոցին։ Այն հանգամանքը, որ Հայոց կաթողիկոսը հենց հաջորդ օրը տալիս է համապատասխան շրջաբերական՝ բավարարելով անվանի գրողի խնդիրը, ենթադրել է տալիս, թե Գևորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսը նույնպես մտադիր էր Մեծ եղեռնի

ջաբ.՝ Տ. Զաւէն Մսրըլեան/, Պէյրութ, Ա. հ., 1985, Աշրգեան Շ., Մեծ եղեռնի առաջին ոգեկոչումները 1919-1920 - Կանթեղ. Գիտական հոդվածների ժողովածու, № 1, 2004, էջ 132:

- ¹ Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության: Գիրք Ե., Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առաջին Հանրապետության տարիներին 1918-1920 թթ., կազմող՝ Ս. Ա. Բեհբուդյան, Երևան, 1999, Փաստաթուղթ թիվ 270, էջ 360-362, հմմտ.՝ Բեհբուդյան Ս., Ինչպե՛ս և ե՛րբ հաստատվեց ապրիլի 24-ը Մեծ եղեռնի նահատակաց օր - «Էջմիածին», 2003, թիվ Գ-Դ, էջ 165:
- ² Տե՛ս **Բեհբուդյան Ս.**, Ինչպե՛ս և ե՛րբ հաստատվեց ապրիլի 24-ը Մեծ եղեռնի նահատակաց օր, 2003, թիվ Գ-Դ, էջ 165:
- ³ **Բեհբուդյան Ս.**, Ինչպե՛ս և ե՛րբ հաստատվեց ապրիլի 24-ը Մեծ եղեռնի նահատակաց օր - «Էջմիածին», 2003, թիվ Գ-Դ, էջ 165: Տե՛ս Վրթանես Փափագյանի առաջարկով ապրիլի 11-ը հիշատակի օր էր հայտարարվել դեռևս Ա հանրապետության շրջանում - <http://www.arevelk.am/am/content/3/562/Վրթանես-Փափագյանի-առաջարկով-ապրիլի-11-ը-հիշատակի-օր-էր-հայտարարվել-դեռևս-Ա-հանրապետության-շրջանում.html>

զոհերի հիշատակի հատուկ օր սահմանելու¹:

Արդեն հաջորդ՝ 1921 թ. Գևորգ Ե. կաթողիկոսը կոնդակով (առ 30 հոկտեմբեր 1921 թ.)՝ կարգադրում է. «Մեք սովին Հայրապետական Կոնդակաւ հաստատեմք զտօն 11/24 ամսեանն ապրիլի անուանելով զօրն «Տօն Ազգային-հիշատակ բիրաւոր նահատակաց մերոց յընթացս համաշխարհային պատերազմին... որպէս և Մեք պատուիրեցաք տպագրել յետ այսու յէջս օրացոյցի Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի»²: Այսպես, եկեղեցական օրացույցներում ավելանում է ևս մի հիշատակի օր՝ ապրիլի 24-ը, որպէս հիշատակ Առաջին աշխարհամարտի ընթացքում նահատակված բյուրավոր հայորդիների: Ցավոք, 1926 թ., Խորհրդային Հայաստանի կառավարության հատուկ որոշմամբ, արգելվեց Հայոց եկեղեցու կողմից Մեծ եղեռնի օրվա՝ ապրիլի 24-ի նշումը³:

Այդպիսով՝ Խորհրդային Հայաստանում 1926–1965 թթ. ոչ միայն պաշտոնապես չէր նշվում Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրը, այլև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն էր արգելվում ապրիլի 24-ին հիշատակի որևէ արարողություն կամ հոգեհանգստյան կարգ կատարելը: Ինչպես դիպուկ նկատել է արձակագիր Վ. Պետրոսյանը. «...Մինչև 1965 թվականը, ամեն ապրիլի 24-ը մենք նույնիսկ զրկված էինք... տըխրելու իրավունքից: Դա վիրավորում էր մեր ազգային ինքնասիրությունը՝ տարեցտարի գերլարման հասցնելով մեր ազգային համբերության և արժանապատվության պրկված զսպանակը: Եվ Մեծ ցեղասպանության 50-ամյա տարելիցի օրն այդ զսպանակը պայթեց»⁴:

Իրավիճակը փոխվեց միայն 1965 թ.: 1964 թ. օգոստոսի 17-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը հրապարակեց սրբատառ կոնդակ Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի կապակցությամբ⁵: Կոնդակը սկսվում է Վեհափառ հայրապետի՝ սեփական ժողովրդի պատմությանը

¹ Տե՛ս **Աշրգեան Շ.**, Մեծ եղեռնի առաջին ոգեկոչումները 1919–1920, էջ 134:

² **Բեհբուդյան Ս.**, Ինչպե՛ս և ե՛րբ հաստատվեց ապրիլի 24-ը Մեծ եղեռնի նահատակաց օր, էջ 168-169:

³ Տե՛ս Հայոց պատմություն: 12-րդ դասարան: Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք /Երկրորդ՝ լրամշակված հրատարակություն: Ա. Մելքոնյան և ուրիշներ/, Զանգակ հրատ., Երևան, 2016, էջ 14:

⁴ **Պետրոսյան Վ.**, Մեր ժողովուրդը իմն է՝ ինչպես... իմ վիշտը, Երևան, 2003, էջ 133:

⁵ Տե՛ս «Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, 1964, թիվ Ը-Թ, էջ 3-5:

տված բյուրեղյա գնահատականով. «Մեր հինաուրց ազգի պատմութիւնը կենդանի յուշարձան մըն է, մարդկային աշխարհի հորիզոնին վրայ բարձրացող, շաղածուած ու մարմին առած նահատակներու արիւնով, բարիին ու գեղեցիկին ծառայելու ստեղծարար հանճարով և սեփական ազգ ու ազատ հայրենիք կերտելու սրբազան կիրքով, այն օրէն մանաւանդ, երբ Աւետարանի լոյսը իջաւ ի Հայաստան աշխարհ: Քրիստոսի Աւետարանով հայ ժողովուրդը հաւատաց կեանքին, հաւատաց լոյսին ու շինարար աշխատանքին, և հաւատաց, թէ **«սէր ոչ երբեք անկանի»** (Ա Կորնթ. ԺԳ 8)»¹:

Լուսամիտ ու բարեհամբավ Վազգեն Առաջինը իսկապէս համոզված էր, որ «Հայոց նահատակութիւնը վերջնապէս պսակուած է յաղթութեան բրաբիոնով ու նոր կեանքի լուսաբացով և վերածնած է մեր հինաուրց երկիրը Հայաստան, իբրև ազգային պետութիւն: ...Այսօր, բոլոր հայերուն համար, ուր որ ալ գտնուին անոնք, աղօթքի օր է նաև մեր ժողովուրդի խաղաղ զարգացման ու բարօրութեան համար, մեր նորակերտ հայրենի երկրի անասանութեան ու շինութեան համար, ապրող ու շնչող և լոյսի մէջ աճող Մայր Հայաստանի համար:

Մեր նահատակները մեռան ապրելու յոյսով և հայ հայրենիքի վերածնունդի տեսիլքով:

Այսօր, բոլորիս համար աղօթքի օր է նաև համայն աշխարհի խաղաղութեան և ժողովուրդներու իրաւ եղբայրութեան համար, որպէսզի այլևս երբե՛ք աշխարհի երեսին ոչ մէկ տեղ արին չհոսի, և մարդիկ սուր չքաշեն իրենց նմաններուն վրայ: Թող խաղաղութիւն ըլլայ աշխարհի բոլոր սահմաններուն վրայ և բոլոր մարդոց սրտերէն ներս: Թող **«ողորմութիւն և ճմարտութիւն պատահեցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեցին»** (Սաղմ. 27-14)»²:

Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի առթիվ հրապարակած սրբատառ կոնդակում Ամենայն Հայոց Վազգեն Առաջին սրբանուն հայրապետը տալիս է հետևյալ հորդոր-հրահանգները.

- Ա. որ յառաջիկայ 1965 տարին հռչակուի մեր Եկեղեցիին և համայն մեր ժողովուրդին համար ազգային սուգի և աղօթքի տարի,
- Բ. որ Հայաստանեայց բոլոր եկեղեցիներուն մէջ ապրիլ 24-ին տեղի ու-

¹ «Էջմիածին», 1964, թիվ Ը-Թ, էջ 3:

² «Էջմիածին», 1964, թիվ Ը-Թ, էջ 4-5:

նենան կրօնական յատուկ արարողություններ և հոգեհանգստեան պաշտօններ՝ աղօթելու համար մեր բիրաւոր նահատակներու հոգւոց խաղաղութեան և լուսաւորման համար,

- Գ. որ բոլոր հայ եկեղեցիներուն մէջ, Ս. Սեղանի մը առջև, զետեղուին մշտավառ կանթեղներ՝ նուիրուած հայ նահատակներու յիշատակին: Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ մշտավառ կանթեղ մը պիտի զետեղուի քրիստոնէութեան առաջին մարտիրոս Ս. Ստեփանոսի սեղանի վերև, ուր և այսուհետև պիտի մատուցուի յատուկ սուրբ պատարագ ամէն տարի ապրիլ 24-ին,
- Դ. որ բոլոր հայ եկեղեցական համայնքներուն և գաղութներուն մէջ, Հայ եկեղեցւոյ հովանիին ներքև, անխտիր բոլոր հայկական միութեանց համերաշխ գործակցութեամբ, կազմակերպուին համազգային յուշի և յարգանքի հանդիսաւոր հաւաքոյթներ, դասախօսութիւններ, գրական-գեղարուեստական նիստեր հայ և այլազգի հասարակութեանց համար՝ նուիրուած Ապրիլյան եղեռնին,
- Ե. որ հայ եկեղեցական իշխանութիւնները, ազգային-հասարակական կազմակերպութիւնները, պատմագիտական-գրական-մշակութային հիմնարկութիւնները և հայ մամուլը իրենց սեպուի պարտքը համարեն խօսքով ու գործով ոգեկոչելու նուիրական յիշատակը Մեծ եղեռնի տարիներուն մարտիրոսացած հայ ժողովուրդին, հայ հոգևորականներուն և գրական-հասարակական մեծանուն գործիչներուն՝ հրապարակելով հայ և այլազգի հեղինակներու պատմական վկայութիւնները, վաւերաթուղթերը, ուսումնասիրութիւնները, յուշերը և գրական-գեղարուեստական գործերը»¹:

Սրբատառ հայրապետական կոնդակում, հրահանգներից հետո, շարադրված է երկնապարզև ու երկնառաք կաթողիկոսի մաղթանք-օրհնությունը, որը եզրափակվում է հետևյալ խոսքերով. «Թող ապրի յաւետ հայ ազգը համայն, որպէսզի շատնայ լոյսը աշխարհի»²: Արդարև, հայ ազգի՝ հայրենասեր ու ազգապաշտ հոգևոր առաջնորդը և նույն ազգի երախտագետ զավակը, արդարորեն բարձր գնահատելով սեփական ազգի ներկայացուցիչների արժանիքներն ու կարողությունները, արժանին մատուցելով իր ազգակիցներին՝ նրանցից յուրաքանչյուրին համարում է մի-

¹ «Էջմիածին», 1964, թիվ Ը-Թ, էջ 5:

² Անդ, էջ 5:

մի լուսատու, ապա վստահաբար հավելում, որ հայ ազգի կենսունակությամբ ու բազմամարդությամբ շատանալու է լույսը աշխարհի:

Հայ ազգը երկնածիր ու պայծառամիտ իր այս կաթողիկոսին՝ Վազգեն վեհափառին է պարտական նաև Հայոց ցեղասպանության փաստի բարձրաձայնման, միջազգային հնչեղության և ճանաչման գործընթացի սկզբնավորման համար¹: Այսպես, Եղեռնի 50-ամյակի առթիվ Վազգեն Առաջինը 1964 թ. սեպտեմբերի 24-ին նամակ հղեց Հռոմի Պողոս Զ. պապին, այնուհետև նույնաբովանդակ նամակներ ուղարկեց նաև Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսիին, Քենտրբերիի Արքեպիսկոպոս և Համայն Անգլիայի Միտրոպոլիտ Մայքլ Ռեմզիին, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտոր, պատվեյի Վիսսեր դ'Յուֆոին: Հռոմի Պողոս Զ. պապին ուղարկված նամակում կարդում ենք հետևյալը. «Նորագույն պատմության մեջ առաջին ցեղասպանության մեծ ոճիրն էր, որ կատարվեց: Նահատակված հայ ժողովրդի միակ մեղքն էր, որ նա կամեցել էր այս աշխարհի վրա ապրել իբրև քրիստոնյա և ազատ ազգություն:

Մենք, իբրև Հայրապետ Հայ Եկեղեցու, Մեր խղճի պարտքը նկատեցինք հատուկ մի կոնդակ գրի առնել, 17 օգոստոս 1964 թվակիր, նվիրված Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի այս մեծ ողբերգության հիսնամյա տարելիցին, 1965 թվականը հոչակելով սուգի և աղոթքի տարի:

Այսու Ձերդ Սրբության և համայն Կաթողիկե Ս. Եկեղեցու բարձր ուշադրությունը հրավիրում ենք սույն տարելիցի վրա, խորհելով, թե առաջնորդված քրիստոնեական գույթի և արդարության զգացումից, պիտի կամենայիք առաջիկա տարի ապրիլ 24-ի օրը Ձեր և Ձեր մեծ Եկեղեցու աղոթքը միացնել մեր աղոթքներին՝ երկու միլիոն նահատակ քրիստոնյա հայերի հոգիների խաղաղության համար»²:

1965 թ. ապրիլի 24-ին, Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի կապակցությամբ, աշխարհասփյուռ հայության բազմաթիվ ներկայացուցիչներ՝ հայ ազգին պատուհասած աղետի ականատեսներ ու նրանց զավակներ, մեծաթիվ ուխտավորներ ներկա եղան Մայր Աթոռում կազմակերպված հիշատակի արարողություններին: Հիշատակի արարողություններին ի-

¹ Տե՛ս **Հարությունյան Ա.**, Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ հանրապետությունը, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2015, էջ 62:

² «Էջմիածին», 1964, ԺԱ, էջ 8-9:

րենց մասնակցությունը բերեցին ՀՍՍՌ մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դավաթյանը, խորհրդահայ մշակույթի երևելի ներկայացուցիչներ Մ. Սարյանը, Պ. Սևակը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Ա. Առաքելյանը, Կ. Զարյանը, Լ. Խաչիկյանը, Ա. Ղարիբյանը, Ա. Աբրահամյանը, Բ. Առաքելյանը, Կ. Ղաֆադարյանը, Վ. Հարությունյանը, Ռ. Իսրայելյանը, Ալ. Հարությունյանը, Գ.Էմինը և ուրիշներ¹: Ամենայն Հայոց լուսաճառագ Վազգեն Առաջին կաթողիկոսը մատուցեց սուրբ և անմահ պատարագ, կատարվեց հոգեհանգրստյան կարգ՝ նվիրված հայ ժողովրդի հավաքական մարտիրոսագրության հիսունամյակին, ապա Մայր տաճարի հյուսիսային կողմում տեղի ունեցավ Մեծ եղեռնի նահատակների հուշարձանի հիմնարկեքի արարողություն: Երեկոյան Վազգեն Առաջինը, իրեն ուղեկցող բարձրաստիճան հոգևորականների թափորով, իր ներկայությամբ պատվեց Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի ունեցած հանդիսավոր նիստը: Ապրիլի 25-ին Մայր տաճարում հանդիսավոր պատարագ մատուցվեց, ապա գումարվեց հուշ-նիստ՝ նվիրված Մեծ եղեռնի հիսնամյակին:

1965 թ. հոկտեմբերի 31-ին Վազգեն Առաջին կաթողիկոսը, հոգևոր դասի և հյուրերի ուղեկցությամբ, Մայր տաճարի հյուսիսային կողմում հանդիսավորապես բացեց Մեծ եղեռնի նահատակների հուշարձանը, որի հեղինակն էր նշանավոր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը: Հուշարձանի քարե պատվանդանի վրա գրված էր. «Խաչքար աղոթքի և ուխտի, ի հիշատակ 1915 թվի ապրիլյան եղեռնի հայ նահատակների»²: Հուշարձանի երկրորդ երեսի վրա՝ աղեղնաձև քարե վահանի մեջ, փորագրված են հայ ժողովրդի արիությունը և ազատագրական պայքարի անշեջ ոգին արտահայտող հերոս բնակավայրերի անունները՝ Վան, Մուսա լեռ, Շապին Գարահիսար, Հաճըն, Մարաշ, Եդեսիա, Զեյթուն, Սասուն և Սարդարապատ: Բացելով կոթողը՝ Վազգեն Առաջինը մասնավորապես ասաց. «Այս տարի, ապրիլի 24-ին, Մենք օրհնեցինք այս հողը, որպեսզի այստեղ մարմին առնե կոթող մը, նվիրված 1915 թվականի հայոց Մեծ եղեռնի զոհերու հիշատակին: Ահա՛ այդ կոթողը, խորհրդանիշը հայոց վշտին, խորանը մեր աղոթքին, վեմը մեր ուխտին: Դիտեցե՛ք

¹ Տե՛ս «Էջմիածին», 1965, ԵԶԷ, էջ 113, հմմտ.՝ Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 63:

² Տե՛ս «Էջմիածին», 1965, ԺԱ-ԺԲ, էջ 45:

զայն, խաչքարերու համախումբ հորինվածք մըն է ան, որ կապրի, կշարժի և դեպի երկինք կտանի վիշտը ամբողջ ժողովուրդի մը, որ մեզի հետ կբաժնէ համայն մարդկությունը, որովհետև անոր ծոցին մեջ, հիսուն տարիներ առաջ, հնարավոր դարձավ պատմության մեծագույն ողբերգություններէն մին, առաջին ցեղասպանությունը մեր դարուն:

Այս խաչքարը դեպի երկինք կտանի նաև մեր աղոթքը մոտ երկու միլիոն մեր նահատակ զավակներուն հոգիներու խաղաղության և լուսավորման համար: Անոնք գերեզման իսկ չունեցան այս աշխարհի վրա, սակայն մեր սրտերը կվկայեն, թե «նոցա է արքայութիւն երկնից»...

Այս օրէն սկսյալ սրբավայր մըն է այստեղ, նվիրված մեր ողբերգական անցյալին, մեր զոհված եղբայրներու և քույրերու հիշատակին, մեր ժողովուրդի ինքնապաշտպանության հերոսամարտերուն, մեր ազգային ուխտին¹: Այս իրադարձությունն ուշագրավ է նաև այն առումով, որ Նահատակաց հուշարձանի բացման արարողությունը զուգահեռաց Վազգեն վեհափառի գահակալության տասնամյա հոբելյանին, ուստի ներկա էին նաև այդ առիթով Հայաստան ժամանած քույր եկեղեցիների գահակալները: Հավելենք, որ մինչ այդ պահը Մեծ եղեռնի նահատակների հիշատակին նվիրված միակ հուշարձանը՝ մատուռի տեսքով, 1950-ական թվականներին կառուցվել էր Անթիլիասում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի տարածքում, ուր ամփոփվել էին Դեր Ջորից բերված զոհերի աճյուններ:

Փաստորէն, 1964 թ. օգոստոսի 17-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի հրապարակած սրբատառ կոնդակը, որով առաջիկա 1965 թ. հռչակվում էր Հայոց եկեղեցու և համայն հայ ժողովրդի համար ազգային սգի և աղոթքի տարի, նախորդեց Հայոց պատմության շրջադարձային կարևոր իրադարձությանը՝ երբ 1965 թվականից Խորհրդային Հայաստանում սկիզբ դրվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը ապրիլի 24-ին պաշտոնապես նշելու ավանդույթին, և հայ ազգի մեծագույն ողբերգությունը վերջապես դադարեց արգելված թեմա լինելուց: Այդ գործում անգնահատելի է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Յակով Նիկիտայի Ջարոբյանի ներդրումը. հայրենասեր մեծ գործիչը վճռական քայլեր ձեռնարկեց հայ ժողովրդին պատուհասած ողբերգության զոհերի

¹ «Էջմիածին», 1965, ԺԱ-ԺԲ, էջ 47-48:

հիշատակին նվիրված միջոցառումները պատշաճ կազմակերպելու համար: 1965 թ. փետրվարին Հայկական ՍՍՀ կառավարությունը պատրաստեց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի կառուցման որոշման նախագիծը, Հայաստանի կոմկուսի կենտկոմը հաստատեց այն: Հուշարձանի բացման պաշտոնական արարողությունը ծրագրված էր 1967 թ. ապրիլի 24-ին, սակայն տեղափոխվեց Հայաստանի խորհրդայնացման օրը՝ նոյեմբերի 29-ին: Եվ ահա, 1967 թ. նոյեմբերի 29-ին, Ծիծեռնակաբերդի բարձունքում հանդիսավոր արարողությամբ բացվեց Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրը¹, որը նաև հայ ազգի վերածնունդը խորհրդանշող և միավորող եզակի հուշարձան է:

1975 թ. ապրիլի 24-ին, Մեծ եղեռնի 60-ամյա տարելիցին, առաջին անգամ ժողովրդի հետ միասին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր բարձրացավ Հայաստանի ղեկավարությունը՝ ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի գլխավորությամբ: Այդ օրն առաջին անգամ հայտարարվեց լուրջության թուպե: Կ. Դեմիրճյանն իր հեռուստատեսությամբ դատապարտեց Օսմանյան Թուրքիայի իրականացրած զազրելի ոճրագործությունը՝ տալով քաղաքական գնահատական և որակելով որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն², մտցվեց ապրիլքսանչորսյան «Լռության թուպե»:

Նորանկախ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ղեկավարման տարիներին Ծիծեռնակաբերդի բարձունքում կառուցվեց թանգարան, որը հետագայում անվանվեց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ: Թանգարանը բացվեց 1995 թ. ապրիլի 24-ին՝ Մեծ եղեռնի 80-րդ տարելիցի օրը³:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Մեծ եղեռնի նահատակների հիշատակի հավերժացման մտայնությամբ ձեռնարկված միջոցառումներն իրենց լրմանը հասան և պսակվեցին Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման արարողությամբ: 2015 թ., Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի առթիվ, ապրիլի 23-ի երեկոյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Տրդատի

¹ Տե՛ս Լրանում է Ծիծեռնակաբերդում Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրի բացման 50 տարին - <https://goo.gl/Cq1ib8>:

² Տե՛ս 1975-ին Կարեն Դեմիրճյանը պաշտոնապես դատապարտեց Թուրքիային (տեսանյութ) - <http://www.a1plus.am/1538161.html>:

³ Տե՛ս Թանգարանի մասին - http://www.genocide-museum.am/arm/museum_info.php:

բաց խորանում 400 տարվա ընդմիջումից հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց սրբադասման կարգ. Հայոց եկեղեցու սրբերի շարքին դասվեցին Հայոց ցեղասպանության անմեղ զոհերը: Ապրիլի 24-ը հռչակվեց «Յիշատակ Սրբոց նահատակաց, որք կատարեցան յընթացս Յեղասպանութեան Հայոց վասն հաւատոյ եւ վասն Հայրենեաց»¹: Որից հետո տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության նահատակների սրբապատկերների քողազերծումը և օրհնությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն աղոթքից հետո Սրբալույս Մյուռնոնով օծեցին երկու սրբապատկերները²: Սրբադասման արարողությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի՝ Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսության հայցով, և ապա, սրբադասման պատմական առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը իրենց հայրապետական պատգամը հղեցին աշխարհասփյուռ հայությանը:

Սրբադասման արարողության ավարտին՝ ժամը 19:15-ին (պատահական ընտրված ժամ չէ, այլ խորհրդանշում է 1915 թվականը), ազդարարվեց լռության ընդմիջում, ապա Մայր տաճարի, աշխարհի գրեթե բոլոր հայկական եկեղեցիները և քրիստոնեական քույր եկեղեցիները հնչեցրին 100 գույժ-ղողանջ, որին հաջորդեց տոնական ղողանջը՝ ի պանծացումն Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների:

Այս հոգեգմայլ և հրաշափառ միջոցառումներով, հիրավի, ամբողջացան Մեծ եղեռնի նահատակների հիշատակի հավերժացման ձեռնարկումները, և, երջանկահիշատակ Վազգեն Առաջին հայրապետի մարգարեական խոսքերի համաձայն՝ այդ օրը «Հայ ժողովուրդի զաւակները, որ ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի... երկիւղածութեամբ կը խոնարհին բիրաւոր նահատակներու անյայտ գերեզմաններուն առջեւ ու կաղօթեն անոնց անմահ հոգիներու խաղաղութեան եւ երանութեան համար: Եւ կը

¹ Տե՛ս Մայր Աթոռում տեղի ունեցավ Հայոց Ցեղասպանության նահատակների սրբադասման արարողությունը (նկարներ) - <http://ter-hambardzum.net/մայր-աթոռում-տեղի-ունեցավ-հայոց-ցեղաս/>:

² Օծված սրբապատկերը ապրիլի 24-ին երկրպագության դրվեց Ծիծեռնակաբերդում:

վերանորոգեն իրենց ուխտը՝ սուրբ պահելու անոնց նուիրական յիշատակը ու մնալու հաւատարիմ անոնց լոյս հաւատքին, անոնց հերոսական ոգիին, հայոց ազգը մէկտեղուած եւ հայոց ամբողջ երկիրը փրկուած տեսնելու անոնց պայծառ երազին»¹:

Այսպիսով՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, հավատարիմ իր ազգային եկեղեցու լինելու էությանը և սեփական ժողովրդին բաժին հասած ցավերին ու արհավիրքներին միասնաբար դիմակայելու իր առաքելությանը, ևս մեկ անգամ ապացուցելով իր ազգային եկեղեցի լինելը՝ ձեռնամուխ եղավ Մեծ եղեռնի նահատակների հիշատակը հավերժացնելու և հավուր պատշաճի նշելու գործին: Հայ Առաքելական Եկեղեցին՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, որպես որդեկորույս, սգատեր մայր, բայց ոչ երբեք եղերամայր, ամեն ինչ արեց կորուսյալ զավակների խնկելի հիշատակը իբրև նահատակների կրոնական սգատոն պատշաճորեն նշելու գործում: Հայոց եկեղեցու և Մայր Աթոռի առաջին ոգեկոչումները, իբրև մայրական սիրո և գուրգուրանքի արտահայտություն ու որդեկորույս ծնողների՝ զավակների հանդեպ հիշատակի, սգո և հարգանքի տուրք, նվիրված են եղել Մեծ եղեռնի օրերին նահատակված հայ մտավորականների և հոգևորականների հիշատակին: Հետագա անբարենպաստ ներքաղաքական ու աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում, բազմաթիվ փորձություններ ու խոչընդոտներ հաղթահարելով, երախտավոր Մայր Աթոռը, հանձինս իր հայրենասեր-որդիասեր, շրջահայաց ու ողջամիտ գահակալների, կարողացավ միս ու արյուն տալ, իրականացնել իր հոգու գանձատուն-ավանդատան մեջ անթեղված նվիրական երազանքն ու ծնողական պարտքի բյուրեղացումը՝ Մեծ եղեռնին զոհ գնացած զավակների հիշատակի հավերժացումը:

¹ «Էջմիածին», 1964, թիվ Ը-Թ, էջ 4, Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 60-61:

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՎԵՐԺԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Արման Մալոյան

Քանայի բառեր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մեծ եղեռն, նահապտակ, Գևորգ Ե. Սուրենյանց, Վազգեն Ա. Պալճյան, խաչքար, կոնդակ, սրբադասման կարգ, Գարեգին Բ. Ներսիսյան:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, հավատարիմ իր ազգային եկեղեցու լինելու էությանը և սեփական ժողովրդին բաժին հասած ցավերին ու արհավիրքներին միասնաբար դիմակայելու իր առաքելությանը, ևս մեկ անգամ ապացուցելով իր ազգային եկեղեցի լինելը՝ ձեռնամուխ եղավ Մեծ եղեռնի նահատակների հիշատակը հավերժացնելու և հավուր պատշաճի նշելու գործին: Հայ Առաքելական Եկեղեցին՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, որպես որդեկորույս, սգատեր մայր, բայց ոչ երբեք եղերամայր, ամեն ինչ արեց կորուսյալ զավակների խնկելի հիշատակը իբրև նահատակների կրոնական սգատոն պատշաճորեն նշելու գործում: Հայոց եկեղեցու և Մայր Աթոռի առաջին ոգեկոչումները, իբրև մայրական սիրո և գուրգուրանքի արտահայտություն ու որդեկորույս ծնողների՝ զավակների հանդեպ հիշատակի, սգո և հարգանքի տուրք, նվիրված են եղել Մեծ եղեռնի օրերին նահատակված հայ մտավորականների և հոգևորականների հիշատակին: Հետագա անբարենպաստ ներքաղաքական ու աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում, բազմաթիվ փորձություններ ու խոչընդոտներ հաղթահարելով, երախտավոր Մայր Աթոռը, հանձինս իր հայրենասեր-որդիասեր, շրջահայաց ու ողջամիտ գահակալների, կարողացավ միս ու արյուն տալ, իրականացնել իր հոգու գանձատուն-ավանդատան մեջ անթեղված նվիրական երազանքն ու ծնողական պարտքի բյուրեղացումը՝ Մեծ եղեռնին զոհ գնացած զավակների հիշատակի հավերժացումը:

ВКЛАД КАТОЛИКОСОВ СВЯТОГО ЕЧМИАДЗИНА В ПРОЦЕСС УВЕКОВЕЧИВАНИЯ ПОМИНОВАНИЯ МУЧЕНИКОВ ГЕНОЦИДА АРМЯН

Арман Малоян

Ключевые слова: Первопрестольный Святой Эчмиадзин, Геноцид армян, мученик, Геворг V Суренянц, Вазген I Палчян, хачкар, кондак, обряд канонизации, Гарегин II Нерсисян.

Армянская Апостольская Церковь, будучи верной традициям национальной церкви, в противостоянии боли и несчастьям, выпавшим на долю собственного

народа, и будучи продолжителем своей исторической миссии, предприняла масштабные действия в увековечении памяти жертв Геноцида.

Армянская Апостольская церковь в страшные дни Геноцида, проявляя родительскую заботу, всеми силами поддерживала свою паству и почтила светлую память мучеников в лице армянской интеллигенции и церковнослужителей.

Дальнейшие неблагоприятные внутривнутриполитические и геополитические события обусловили новые испытания и препятствия, выпавшие на долю Армянской церкви. Однако, благодаря мудрости и осмотрительности верховных правителей, Армянская Апостольская Церковь смогла воздать дань кристальной памяти жертвам Геноцида.

THE INPUT OF SAINT ETCHMIATSIN CATHOLICOS IN THE PROCESS OF ETERNALIZING THE MEMORY OF ARMENIAN GENOCIDE MARTYRS

Arman Maloyan

Keywords: *Holy See of Etchmiatsin, Armenian genocide, martyr, Gevorg V Sourenyants, Vazken I Palchyan (Baljian), Cross stone, Kontakion, canonization ceremony, Karekin II Nersessian.*

The Armenian Apostolic church being true to its convictions as a national church and its mission of confronting jointly the sorrows and calamities of its own nation, once again proved its existence as a national church undertaking the task of eternalizing the memory of the martyrs of the Great Genocide and celebrating it properly. The Armenian Apostolic Church in the face of the Mother See of Holy Etchmiadzin, as a mournful mother having lost her children, but never as a tragic mother, did everything for the memory of the lost children to be properly celebrated as martyrs' religious day.

As a symbol of motherhood love and grooming, commemoration of parents having lost their children, respect and tribute to their sons and daughters, the first exorcisms of the Armenian Church and the Mother See have been devoted to the memory of martyred Armenian intellectuals and clergymen. Overcoming many trials and obstacles in the conditions of the unfavorable internal political and geopolitical situation, the blessed Mother See, in its own patriotic, prudent and reasonable rulers, was able to give meat and blood to carry out the sacramental dream of its soul and the domination of parental debt to eternalize the memory of the martyrs of the Armenian Genocide.